Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջան

Լոռու Մարզ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պրովանս-Ալպեր Կոտ դ'Ազուր Տարածաշրջանը՝ ներկայացված տարածաշրջանի խորհրդի նախագահ պարոն Ռենո Մյուզելյեի կողմից, տեղակայված Hôtel de Région, 27 place Jules Guesde, Մարսել, Ֆրանսիայի Հանրապետություն, մի կողմից

ԵՎ

Լոռու Մարզը՝ ներկայացված մարզպետ պարոն Անդրեյ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ կողմից, տեղակայված մարզպետարանում, Հայքի հրապարակ, քաղաք Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն, մյուս կողմից

Հաստատում են, որ

- 2007 թ. հունվարի Թիոլիեր օրենքի ընդունումից սկսած ֆրանսիական տարածքային ինքնակառավարման մարմինները և նրանց կառավարությունները կարող են Ֆրանսիայի միջազգային պարտավորությունների շրջանակներում կնքել կոնվենցիաներ օտարերկրյա տեղական իշխանությունների հետ համագործակցության կամ զարգացման ուղղությամբ գործողություններ իրականացնելու համար;

- 2014 թ. հուլիսի 7-ին ուժի մեջ մտած «Զարգացման և համերաշխության միջազգային քաղաքականությունը» կողմնորոշման և ծրագրավորման օրենքը եկել է ամրապնդելու այդ մեխանիզմը:

- Հայաստանում ապակենտրոնացված համագործակցության գործողությունները թույլատրվում են 1997 թ. մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի n°728 հրամանագրով:

Ուսումնասիրում-քննարկում են.

- Ֆրանսիայի և Հայաստանի պետությունների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունները

- Մարդկային, մշակութային և տնտեսական կապերը Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանի տարածքի և Հայաստանի միջև

- Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանային խորհրդի նախագահի և Լոռու մարզպետի կողմից 1997 թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված բարեկամության Հանդիսավոր Խարտիայով սահմանված ուղեցույցները:

- Երկկողմանի համագործակցության շրջանակային պայմանագիրը՝ ստորագրված 2008 թ. վերը նշված տարածաշրջանների միջև

- Մինչ այսօր երկու տարածաշրջանների միջև իրականացված համագործակցության գործողությունների դրական արդյունքները

- Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանի ներկայացուցիչների կողմից 2016 թ. դեկտեմբերին դեպի Լոռու Մարզ իրականացված գործուղումները, որոնք թույլ տվեցին հայտնաբերել համագործակցության նոր ոլորտներ

- Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանի Խորհրդի Նախագահի և Լոռու մարզպետի միջև 2017 թ. նոյեմբերի 20-ին և 21-ին Մարսելում տեղի ունեցած հանդիպումը «Ապագայի Միջերկրականը» իրադարձության ժամանակ, որը թույլ տվեց եզրահանգում կատարել համագործակցության պայմանագրի վերասահմանման անհրաժեշտության մասին, ինչը թույլ կտա հաշվի առնել համագործակցության նոր սահմանված ոլորտները և կլիմայական փոփոխություններին հարմարվելուն ուղղված տարածքների համատեղ աշխատանքի կարևորությունը

- Տարածաշրջանների ցանկությունը իրենց բոլոր հանրային և մասնավոր գործընկերներին առաջարկելու համագործակցության կառուցողական շրջանակ՝ հիմնվելով իրենց տարածքների ինստիտուցիոնալ, տնտեսական, մշակութային, զբոսաշրջային և գիտական ներուժի վրա

Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանը և Լոռու Մարզը համաձայնության եկան հետևյալի մասին.

Հոդված 1. Համագործակցության առարկան

Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանը և Լոռու Մարզը հայտարարում են, որ նպատակ ունեն հետևել իրենց համագործակցությանը և դրա շրջանակներում սահմանել և իրականացնել ապակենտրոնացված համագործակցության գործողություններ՝ խստորեն հետևելով ազգային և միջազգային պարտավորություններին, որոնք ստանձնել են իրենց համապատասխան պետությունները:

Հոդված 2. Համագործակցության ոլորտները

Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջանը և Լոռու Մարզը փոխադարձության և հավասարակշռության սկզբունքով կիրականացնեն փորձի և կարողությունների փոխանակում ինստիտուցիոնալ, տնտեսական, ասոցիատիվ, գիտական և այլ տեսակի համագործակցության շրջանակներում հետևյալ ոլորտներում.

Տարածքների հարմարեցումը կլիմայական փոփոխություններին.

- վերականգնվող էներգիա,
- շարժունակություն և կայուն տրանսպորտ
- բնության ռիսկերի կանխարգելում
-իրազեկումը կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ

Տնտեսական զարգացում.

- տարածքների և ձեռնարկությունների գրավչությունը
- զբոսաշրջություն
- թվային տեխնոլոգիաներ և համակարգչային ծրագրավորում
- խելացի քաղաքների զարգացում (smart cities)

Ժառանգություն.

- բնության ժառանգության պաշտպանություն
- ընդհանուր հետաքրքրության կամ Համաշխարհային Ժառանգության (UNESCO) ցուցակում ընդգրկված ճարտարապետական ժառանգության արժևորումը

Ֆրանկոֆոնիայի զարգացումը

Երիտասարդություն

<u>Հոդված 3. Համագործակցության պայմանագրի իրականացումը</u>

Այս պայմանագիրը կիրականացվի երկու տարածաշրջանների միջև կանոնավոր հանդիպումների և համագործակցության գործողությունների շրջանակներում: Դա կարող է, անհրաժեշտության դեպքում, տեղի տալ տարեկան կամ բազմամյա կիրառման կոնվենցիաների՝ ճշտելով նախատեսված գործողությունների առարկան և ֆինանսական պարտավորությունների համար կանխատեսվող գումարը :

Այս պայմանագիրը կլինի կանոնավոր վերահսկողության տակ՝ իրականացված կամ ընթացիկ գործողությունների մասին հաշվետվություն ներկայացնելու, դրանց հետևանքները գնահատելու և հետագա տարիների համար նոր ուղղություններ քննարկելու համար:

Այս պայմանագրի շրջանակներում երկու տարածաշրջանները կկարողանան համատեղ աշխատել Եվրոպական Միության հարևանության քաղաքականության մասը կազմող նախագծերի նախագծման և իրականացման շուրջ:

<u>Հոդված 4. Ուժի մեջ մտնելը</u>

Համագործակցության սույն պայմանագիրն ուժի մեջ կմտնի ստորագրումից հետո, որը տեղի կունենա դրա ընդունումից հետո երկու տարածաշրջաններից յուրաքանչյուրին հատուկ ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 5. Համագործակցության պայմանագրի դադարեցումը

Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ սույն դրույթները դադարեցնելու մտադրության մասին տվյալ կողմը մյուսին պետք է ծանուցում ներկայացնի վեց ամիս առաջ:
Համագործակցության պայմանագրի դադարեցումն ուժի մեջ է մտնում գործընկեր տարածաշրջանների կողմից հաստատումից հետո երկու երկրների օրենսդրությամբ նախատեսված եղանակներով:

Պայմանագիրը կազմված է 4 բնօրինակով (2 օրինակ ֆրանսերենով և 2 օրինակ հայերենով), 2 տեքստերն ունեն հավասարազոր ուժ:

Կազմված է ..... -ում, ... - ին

Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազուրի Տարածաշրջան

Լոռու Մարզ

Ռենո Մյուզելիե

Անդրեյ ՂՈՒԿԱՍՅԱՆ

RÉGION SUD
PROVENCE ALPES CÔTE D'AZUR

Région de Lori

ACCORD DE COOPERATION

Entre

La Région Provence-Alpes-Côte d'Azur,
Sise à l'Hôtel de Région, 27 place Jules Guesde à Marseille (France), représentée par le Président du Conseil régional Provence-Alpes-Côte d'Azur, Monsieur Renaud Muselier

D'une part,

Et

La Région de Lori,
Sise à l'Hôtel de Région, Place Haïk à Vanadzor (Arménie), représentée par le Gouverneur de la Région de Lori, Monsieur Andrey GHUKASYAN

D'autre part,

Constatant :

- que depuis la loi Thiollière de janvier 2007, les collectivités territoriales françaises et leurs groupements peuvent, dans le respect des engagements internationaux de la France, conclure des conventions avec des autorités locales étrangères pour mener des actions de coopération ou d'aide au développement ;

- que la loi d'orientation et de programmation « Politique de développement et de solidarité internationale » entrée en vigueur le 7 juillet 2014 est venue conforter ce dispositif en France ;

- qu'en Arménie, les actions de coopération décentralisée sont autorisées par le décret du Président de la République d'Arménie n°728 en date du 6 mai 1997 ;

Considérant :

- les relations d'amitié et de coopération existant entre les Etats français et arménien ;

- les liens humains, culturels et économiques entre le territoire régional Provence-Alpes-Côte d'Azur et l'Arménie ;

- les orientations définies par la Charte Solennelle de jumelage, signée le 15 décembre 1997 par le Président du Conseil régional de Provence-Alpes-Côte d'Azur et le Gouverneur de la Région de Lori ;

- l'accord-cadre de coopération bilatérale signé en 2008 entre les deux régions susmentionnées ;

- le bilan positif des actions de coopération conduites par les deux régions jusqu'à ce jour ;

- les déplacements effectués par des représentants de la Région Provence-Alpes-Côte d'Azur en Région de Lori en décembre 2016 qui ont permis de faire émerger de nouveaux domaines de coopération ;

- la rencontre entre le Président du Conseil régional Provence-Alpes-Côte d'Azur et le Gouverneur de la Région de Lori lors de l'évènement la Méditerranée du Futur à Marseille les 20 et 21 novembre 2017 qui a permis de conclure à la nécessité de redéfinir un accord de coopération permettant de prendre en compte les nouveaux domaines de coopération identifiés et l'importance de travailler conjointement à l'adaptation des territoires aux changements climatiques ;

- le souhait des régions, d'offrir à l'ensemble de leurs partenaires publics et privés un cadre de coopération structurant s'appuyant sur les potentialités institutionnelles, économiques, culturelles, touristiques et scientifiques de leurs territoires ;

La Région Provence-Alpes-Côte d'Azur et la Région de Lori conviennent :

Article 1 : Objet du partenariat

La Région Provence-Alpes-Côte d'Azur et la Région de Lori déclarent leur intention de poursuivre leur partenariat et, dans ce cadre, de définir et de mettre en œuvre des actions de coopération décentralisée dans le strict respect des engagements nationaux et internationaux pris par leurs Etats respectifs.

Article 2 : Domaines de coopération

La Région Provence-Alpes-Côte d'Azur et la Région de Lori procèderont dans un esprit de réciprocité et d'équilibre à des transferts d'expérience et de savoir-faire, dans le cadre de partenariats institutionnels, économiques, associatifs, scientifiques, etc. dans les domaines suivants :

Adaptation des territoires aux changements climatiques :
- énergies renouvelables,
- mobilité et transports durables,
- prévention des risques naturels,
- sensibilisation à la lutte contre le dérèglement climatique et à la préservation de l'environnement

Développement économique :
- attractivité des territoires et des entreprises
- tourisme
- technologies numériques et programmation informatique
- développement des villes intelligentes (smart cities)

Patrimoine :
- protection du patrimoine naturel
- valorisation du patrimoine architectural d'intérêt partagé ou classé sur la Liste du Patrimoine mondial (UNESCO)

Développement de la francophonie

Jeunesse

Article 3 : Mise en œuvre de l'accord de coopération

Cet accord sera mis en œuvre dans le cadre de rencontres régulières entre les deux régions et d'actions de coopération. Il pourra, le cas échéant, donner lieu à des conventions d'application annuelles ou pluriannuelles précisant l'objet des actions envisagées et le montant prévisionnel des engagements financiers.

Cet accord fera l'objet d'un suivi régulier pour dresser un bilan des actions réalisées ou en cours, en évaluer les effets et discuter des nouvelles orientations pour les années à venir.

Dans le cadre de cet accord, les deux régions pourront travailler conjointement à la conception et à la mise en œuvre de projets s'inscrivant dans la politique de voisinage de l'Union Européenne.

Article 4 : Prise d'effet

Le présent accord de coopération entrera en vigueur après sa signature, laquelle interviendra après son adoption conformément aux procédures propres à chacune des deux régions.

Article 5 : Résiliation de l'accord de coopération

L'intention de mettre fin aux présentes dispositions, à l'initiative de l'une ou l'autre des parties, doit être notifiée par l'autre partie avec un préavis de six mois.

La résiliation de l'accord de coopération est effective après approbation par les régions partenaires dans les formes prévues par la législation des deux pays.

Cet accord est rédigé en français et en arménien, les deux textes faisant également foi.

Fait à Marseille, le 25 novembre 2019

Pour la Région Provence-Alpes-Côte d'Azur



Renaud MUSELIER

Pour la Région de Lori



Andrey GHUKASYAN